ԴՐԱՄԱՏԻԿ ՀՈԳԵՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՌՈՒԲԵՆ ՉԱՐԴԱՐՅԱՆԻ ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ

Զարդարյանի՝ հոգեբան գրող լինելու մասին առաջին անգամ ընդգծել է Զապել Եսայանը «Ցայգալույսին» նվիրված գրական ասուլիսների ժամանակ. «...անիկա Խարբերդն էր, իր տառապանքին ներքև հզոր և նույնիսկ իր տառապանքով հզորացած, անիկա ոգին էր մեր ամենեն քաղցրորեն տխուր բանաստեղծությամբ մը օծուն հայ գավառին որուն վշտագին բայց ժպտուն, հալածական բայց երազատես զավակներուն ցավի և ուրախության վանկերը, աչքերու հրայրքը, հոգիներու սարսուռները կը փոխանցեր մեզի իր գեղեցիկ և հանկուցիչ արվեստին միջոցավ»[1]: Հակառակ կարծիքին է Հակոբ Օշականը՝ գտնելով, որ Զարդարյանին չի հաջողվել հոգեբանական կերպարներ ստեղծել. «Զարդարյանի պատմվածքները տեսակ մը խառնուրդ են բարքերու, ձգտումներու, մտածումներու ու դեռ ուրիշ բաներու: Այս տարտղնումին մեջ **հոգեբանությունը**, այսինքն հոգեկան վիճակներ ստեղծելու, անոնց զարգացումին հսկելու, անոնց ուռելուն և հետո քայքայվելուն մեքենականությունը վարելու աշխատանքը ու շահագործումը կոտորակված ու պակասավոր տեղի կ ունենան»[2]: Չկիսելով Հ. Օշականի գնահատականը, որի՝ Զարդարյանին նվիրված ընդարձակ ուսումնասիրությունն առանձին դեպքերում օբյեկտիվ է ու անկողմնակալ, փորձենք առանց սուբյեկտիվիզմի, առարկայորեն ցույց տալ Զարդարյանի կերպարաստեղծման հոգեբանական կողմերն ու եղանակները: Հոգեկերտվածքը և դրամատիզմը Զարդարյանի նորավեպերի ներհատկություններից են, ուժեղագույն գծերից: Գրեթե բոլոր նովելներում Զարդարյանը պատկերել է տարբեր իրադրություններում հայտնված մարդկանց հոգեվիճակներ՝ իրենց ուրույն ներաշխարհով և ողբերգականությամբ: «Եկեղեցիին առյուծը» ստեղծագործության մեջ քահանայի դրաման պայմանավորված է թուրքերի հարձակումներից հայերի անպաշտպանվածությամբ և դրանց դեմն առնելու անզորության գիտակցությամբ: Կով Առաքելի հոգեդրաման ծնվում է կիսավեր տան փլուզումը կանգնեցնելու շարունակական մաքառումներից: «Վա՜խ, ես մեռնեի» նորավեպում արտացոլված է նվաստացած, տնից վռնդված, բայց հավատարիմ հայ կնոջ՝ Հայկուհու հոգեկան դրաման, որն անբարո կյանք վարած ամուսնու մահն ընդունում է խորին հուսահատությամբ ու ողբով: «Տերտերին

[1] Գրական ասուլիսներ, Դ. Կ. Պոլիս, 1913, էջ 10-11:
[2] Օշական Հ., Համապատկեր արևմտահայ գրականության. հտ. 7. Անթիլիաս, 1979, էջ 310:

հարսը» պատումում նույնպես կնոջ դրամատիկ կերպար է ներկայացված՝ հանձին Հռոմերի: Այդ կինը նույնպես, ինչպես նախորդ երկի հերոսուհին, պատվախնդիր է, սակայն ի տարբերություն Հայկուհու՝ նրա դրաման ծնունդ է առնում երկրորդ ամուսնու (առաջինը մահացել էր) կողմից անուշադրության և անտարբերության ցուցաբերումից: Շատ ավելի նուրբ հոգեվիճակներ են ներկայացված «Սև հավը կանչեց» վիպակում, ուր գրեթե բոլոր հերոսներն էլ տառապող հոգիներ են: Գերդաստանի ավագ որդու (խոջաբաշի Նիկո) և կրտսեր հարսի (Նունիկ) անխոհեմ արարքը՝ սեռական կապը, հանգեցնում է ընտանեկան ողբերգության: Հոգեկան առաջին հարվածը ստանում է Սիմոյի որդին, ում մանուկ սրտին անդարմանելի ցավ են պատճառում մոր և հորեղբոր գաղտնի հարաբերությունները: Այդ անարգանքը գերեզման է իջեցնում Նիկոյի կնոջը: Ողբերգական կերպար է և պառավ Հռփիկը, ով ճիգեր է գործադրում ամեն գնով փրկելու գերդաստանի պատիվը: Սակայն ամենադրամատիկ կերպարները ամուսիններ Սիմոն ու Նունիկն են: Նունիկը, չնայած ամուսնական դավաճանությանը, օժտված է նուրբ հոգեբանությամբ, և Զարդարյանը, զերծ մնալով մերկապարանոց քննադատությունից, նրան ներկայացնում է իր կանացի բոլոր թուլություններով ու բանականության դրսևորումներով: «Կմտածեր թե ինք ալ ամեն կնկա պես սիրտ ուներ, սրտի տեր մը ուներ ու հետևաբար կբաղձար ծառի մը տակ շքավորիլ, մինչդեռ գեղեցկություն, հրապույր, քարմություն ամենքն ալ ճամփու հայելով անցեր գացեր էին: Հացը հաց էր վերջապես, մարդ սոխով մը ալ կրնար կշտանալ, մատ մը պանիրով ալ. թող էրիկը քովն ըլլար, ամեն իրիկուն գոտին իր գլխուն վրա քակեր, շատ գիշեր ալ անոթի կպառկեին»: Զարդարյանը ողբերգական նոր շերտեր է բացում Նունիկի ներաշխարհում. «Հետո, ո՞վ գիտեր թե էրիկը օտար քաղաքի մեջ, ուր գեղեցկություն շատ կա, ուր կնիկները աչքով, բերնով, քայլվածքով կիրապուրեն ու մարդիկը իրենց կկանչեն, կըսեին, հավատարիմ կմնար իրեն. ի՞նչ գիտնար թե հաճույքներուն ետևեն ինքզինքը ուզածին պես չէր զբոսցներ»: Զարդարյանն իր հերոսուհու դրաման հասցնում է կատարելության, երբ կերպարի մեջ կռիվ են տալիս երկու տարբեր կանայք «Այս բոլորեն ետքը տակավին կմեղադրեր իր էրիկը, որ ձգեր գացեր էր գինք՝ առանց գլխուն վերև ըլլալու, քանի որ առանց թիկունքի էքսյուկ-էթեկ մը էր ինք ու շուտ կրնար ծռիլ, երերիլ ամեն հովե»:

«...սակայն հոգիեն ուրիշ ծայն մը ալ կպոռար իրեն՝ թե ինք անզգամ կնիկ մը էր, բյուր անգամ անարժան անոր՝ որ օտարին դռները գլուխը հազար քարի կզարնե ու վաստակածը տուն կբերե, թե էրկան բոլոր թերությունները, անհոգությունը երբեք կամավոր չէին, թե ամեն պարագայի տակ պարտավոր էր ինք իր առաքինությունը ծյունի պես մաքուր պահել, անով ապրիլ ու անով մեռնիլ»:

Պակաս դրամատիկ չէ նաև պանդուխտ Սիմոյի կերպարը, ով, իմանալով սոսկալի եղելությունը, բաժանվում է կնոջից և լքում զավակներին: Ի դեմս Սիմոյի՝ Զարդարյանը ներկայացնում է տղամարդկային արժանապատվությունը ոտնահարված անձնավորության, ում համար դավաճանությունը հավասարազոր է դժոխքի՝ Այն կասկածը, թե ինքը միշտ խաբված է եղել, և երեխաները իրենը չեն, նոր հարված է հասցնում նրա խորտակված էությանը: Իսկ հասարակության կարծրացած օրենքները՝ Սիմոյի երկրորդ ամուսնությունն արգելելը, հերոսի դրամատիզմը հասցնում են բարձրակետի:

«Գավառական կյանքի սոցիալական և բարոյական ավերումը, մեր խուլ, հետամնաց միջավայրի սարսափելի տրագեդիան արտահայտված է Ռուբեն Զարդարյանի «Սև հավը կանչեց» գրվածքի մեջ, համառոտ և ամփոփ, բայց կենդանի գծերով և ապրած հոգեբանությամբ»[3], - ընդգծում է գրականագետ Սիմոն Հակոբյանը:

Զարդարյանի նորավեպերում մեծ մասամբ ներառված է քայքայվող ընտանիքների անդամների հոգեկան դրամա: Ուշագրավն այն է, որ յուրաքանչյուր նովել՝ կյանքի արտապատկերման և կերպավորման ձևերով ու շեշտադրումներով, չի կրկնում մեկ այլ երկի: Ամեն մեկում Զարդարյանը տվել է իրականության մի կողմը և ստեղծել միանգամայն տարբեր հոգեբանության ու մտածողության տեր հերոսների: «Զավակը» երկում դարձյալ փլուզվող ընտանիքի պատմությունն է՝ այս անգամ բոլորովին այլ դիտանկյունից: Հնդախտը (խոլերա) պատճառ է դառնում բյուրավոր մարդկանց վախճանի, այդ թվում և Սանուկ աղայի, որի կինը երեք երեխայի հետ անհկարագրելի տառապանքներ է կրում: Կարճ ընթացքում շեն տունն ավերակի է վերածվում, երբեմնի բոլոր բարեկամները երես են թեքում Սառայից՝ թողնելով նրան միայնակ ու անպաշտպան իր որբերի հետ: Զարդարյանը մի քանի պատկերի մեջ ամբողջացնում է դժբախտ կնոջը բաժին ընկած ողբերգությունը: Նա նրբորեն բացում է այն կնոջ հոգին, ով սովոր լինելով լավ կյանքի՝ ստիպված մուրացկանություն է անում. «...երբ առաջին հանդիպող դռան ուռնակին երկնցուց ձեռքը՝ վարանում մը կեցուց գինքը, հագիվ տեղեն վերցուց ու ծգեց և աչքերին արցունքը հոսիլ սկսավ, լեզուն կարկամած էր, շրթունքը համր ու իրար փակած, ըսելիք բան մը չէր գիտեր, արհեստին բառերուն անտեղյակ էր»: Ամենածանր հարվածը, սակայն Սառան ստանում է տարագիր որդուց՝ Ավետիսից, ով մահամերձ մորը նայում է արհամարհանքով և թուրքերեն հոխորտում.

-Ձգե, ծո, ինչու՞ մայրս կ ըլլա:

---

[3] «Սրեգ», Բ տարի, Բեռլին, 1923, էջ 301:

Զարդարյանի նորավեպերի տառապող հոգիների գերակշռող մասը կանայք են, և դա պատահական չէ: Ժամանակի մամուլի ուսումնասիրություններից պարզվում է, որ հայ կնոջը, մասնավորապես գավառաբնակներին նվիրված մեծաքանակ հոդվածներ ու ստեղծագործություններ կան: Նշենք թեկուզ դրանցից մեկը՝ Շահարիկի «Այրին» նովելը, որը 1903թ. բուռն քննարկումների նյութ դարձավ Կ.Պոլսի «Մասիս» թերթում: Երկի հերոսուհին՝ երեսունչորսամյա այրի Արուսյակը, կյանքը կապում է երեսնամյա Թորոսի՝ ամուսնու եղբորորդու հետ: Ըստ հեղինակի՝ այրին այդ քայլին դիմում է և գիտակցված, և սեռային զգացումների թելադրանքով: Որպես կին՝ միանգամայն ընդունելի համարելով Արուսյակի սեռական ցանկությունը՝ Շահարիկը, այնուամենայնիվ, հերոսուհուն մղում է գիտակցական գործողության: Մի կողմից՝ բազմանդամ ընտանիքի հոգսի ծանրությունը և տան տղամարդու բացակայությունը, մյուս կողմից՝ այրու հոգևոր և մարմնական սիրո կարոտը և գյուղի վավաշոտ տղամարդկանց հայացքներն ու ակնարկները գրողին ստիպում են որպես լավագույն ելք՝ նշել Արուսյակի և նրա զավակներին հարազատ դարձած Թորոսի ամուսնությունը:

Արևմտահայ գրագետներից մեկին՝ Օնիկ Չիֆթե-Սարաֆին, այս երկը լուրջ խորհելու և մտահոգվելու տեղիք է տալիս, որն էլ նրանում առկա մի քանի կարևոր կետերի վրա սևեռելով իր ուշադրությունը՝ հարցում է ուղղում գավառի գրիչներին՝ նրանցից առավելագույնը իմանալու գավառի բարոյական վիճակի վերաբերյալ: Մասնավորապես, Չիֆթե-Սարաֆին ապշեցնում է նորավեպի հերոսուհու այն մտորումը, թե ինքը կարող է Թորոսի հետ ամուսնությամբ հաղորդ տալ կանացի ցանկությանը, քանի որ «...ապօրինի հարաբերությունները որոնք կը վխտային իր բոլորտիքը...», կարդարացնեին իր ցանկությունը: Չիֆթե-Սարաֆն ուզում է իմանալ, թե արդյո՞ք այդաստիճան բարքերի անկում կա գավառներում: Նրա հարցմանն արձագանքում են թե երկի հեղինակը և թե գավառագիրներ Խոսրով Քեշիշյանը, Հովհաննես Գազանճյանը և Ռուբեն Զարդարյանը: Բոլորն էլ տարբեր ձևակերպումներով հաստատում են գավառներում առկա բարոյական տագնապահարույց վիճակը՝ նկատելով, թե կնոջ սայթաքման պատճառը սոցիալական անբարենպաստ պայմաններն են և տղամարդկանց պանդխտությունը: Զարդարյանն իր «Բարոյականը գավառներու մեջ» («Մասիս», Կ.Պոլիս, 1903, համար 30) հոդվածում խորամուխ է լինում տարագրության առաջ բերած աղետալի հետևանքների մեջ, որոնցից ամենագլխավորը ազգապղծությունն է՝ հարսի և տեգրոջ, հարսի և սկեսրայրի, փեսայի և քեռու կամ նմանօրինակ խայտառակ կապերը: Այդ երևույթների մեջ գրագետը, սոցիալական չարիքից բացի, տեսնում է օտար, մասնավորապես «գաղիական» (ֆրանսիական) բարքերի ներթափանցում: Ըստ Զարդարյանի՝ պատճառների ցանկում մի առանձին տեղ ունեն նաև տարիքային առումով անհամապատաս-

խան ամուսնությունները, երբ 10-12 տարեկան տղային կարգում են 18-20-ամյա աղջիկների հետ: Բնական է, որ հասուն օրիորդը, իր կողքին չունենալով կայացած տղամարդ, չի կարող մի քանի տարի սոսկ որպես աշխատուժ մնալ ամուսնական հարկի տակ՝ պահպանելով առաքինություն: Զարդարյանն անընդունելի է համարում մեկ այլ իրողություն ևս. 16-17 տարեկան աղջիկների զուգավորման փաստը 28-30-ամյա տղամարդկանց հետ. «ընկերային բարոյականի տեսակետով աղետալի բան մըն է»,- եզրահանգում է գրողը: Մյուս կողմից էլ Զարդարյանը սխալ է համարում ծնողների կամքով կամ առանց ընտրության ամուսնությունները, որոնք շատ դեպքերում ամուսիններին կանգնեցնում են ապահարզանի փաստի առջև: Բոլոր այդ դրսևորումները՝ ազգի բարոյական առողջությանը սպառնացող, ծնունդ են առաջին հերթին սոցիալական և նրանից ածանցյալ հոգեբանական գործոնների: Իսկ դրանք նվազեցնելու լավագույն միջոցը, ըստ Զարդարյանի, սիրո հիմքի վրա կայացած ամուսնությունն է: Արծակագիրը խելամտորեն է մոտենում ազգակործան խնդիրներին. սիրող կինը միայն կարող է տարիներով սպասել ամուսնուն, սիրող կինը չի դավաճանի կողակցին, ամեն պարագայում կմնա անբիծ:

Զարդարյանի նկատած բոլոր էական կողմերն էլ արտացոլված են նրա երկերում: «Վա՜խ, ես մեռնեի» նորավեպում ծնողների ցանկությամբ ամուսնացած կնոջ դժբախտությունն է, «Սև հավը կանչեց»-ում տարագրության դառը պտուղները ճաշակած կնոջ բարոյական անկումն է: Զարդարյանի դիտանկյունից հայ կնոջ եղերականությունն ավելի խոր արմատներ ունի: Ժամանակին նա տեսություն է ցանկացել գրել այդ մասին, որն այդպես էլ անավարտ է մնացել: Սակայն մի հրապարակման մեջ՝ «Խարբերդցի կնիկը» վերնագրով վերոնշյալ տեսության շրջանակներում («Ծաղիկ» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 1903, համար 36), Զարդարյանը բացահայտում է խնդրին առնչվող ավանդական մի կարծրատիպ. «Հազիվ աղջիկ զավակը գլուխը գետնին վրա, աշխարհի իր առաջին լացը կուլա և դայակը՝ հոր ու բարեկամի աչքի լույսը կը բաշխե, ընտանիքի մեծերուն դեմքն ի վար դժգոհ տրամադրության մը հոգեկան արտահայտությունը կը կախվի՝ կըսես ուրիշ լաց մըն ալ իրենց իրեսին՝ սխալ ապսպրանք մ ընդունող մարդու անբավարարությամբ»: Զարդարյանը նրբին հոգեբանությամբ գտել է հայ ազգի մտածելակերպի մի ուրույն դրսևորում, այն է՝ հենց ծնված օրվանից աղջիկ զավակի համար շատ չուրախանալը և արու զավակին ստորադասելը: Թերևս սա է պատճառը, համաձայն Զարդարյանի դիտարկման, որ հայ ընտանիքներում մինչ ամուսնանալը աղջիկը անիրավորեն բեռ է համարվում, շատ հաճախ ծնողները վերաբերվում են նրան որպես ծախու ապրանքի: «Սիրելիներու հեռակայության առթած սրտմաշուքները, կսկիծները, թերևս անհարմար ամուսնության մը անտրտունջ հնազանդությունը և իր

կյանքին դեռ բոլոր մյուս զոհաբերությունները՝ կարմիր նարոտն են որ կը կապեն անոր քունքեն ու ճակտեն, մկրտության ավազանեն առաջ: Անեծքին սկզբնավորությունն է ասի »,- եզրակացնում է Զարդարյանը:

Կանանց հիմնախնդիրներին նվիրված այլ հրապարակումներ ևս ունի Զարդարյանը, սակայն բավարարվենք այսքանով և վերադառնանք մեր բուն թեմային: Այժմ անդրադառնանք այն միջոցներին ու եղանակներին, որոնց շնորհիվ Զարդարյանին հաջողվել է հոգեբանական տիպարներ ստեղծել և ի ցույց դնել նրանց հոգեկան խռովքը: Ընդհանրապես Զարդարյանի նորավեպերին հատուկ չեն երկխոսությունները ու կոնֆլիկտները, որոնցում ավելի վառ են դրսևորվում հերոսների հոգեվիճակներն ու մտահուզանքները: Զարդարյանի հերոսները լուռ են, ինքնամփոփ. նրանք իրենց ներսում կրում են մեծ տառապանքներ և ոչ ոքի հաղորդակից չեն դարձնում իրենց վշտերին: Զարդարյանն այդ եղանակով կարծեք թե ընթերցողին տեսանելի է դարձնում իր կերպարների հոգու ցավերը խորությամբ: Այսինքն՝ կարելի է որոշակիորեն ասել, թե գրողի կերտած հերոսները լռությամբ, իրենք իրենց ցավի մեջ ու ցավի հետ ասում են առավելագույնը մարդկային տառապանքների մասին: Լռությամբ ու ինքնապարփակմամբ՝ հոգեդրամա պատկերելու այս գիծը հետագայում շարունակել ու զարգացրել են Համաստեղը և Ակսել Բակունցը, ընդ որում՝ շատ հաջող կերպով: Հատկապես Ա. Բակունցի մոտ, ինչպես նրբորեն նկատել է գրականագետ Սերգեյ Աթաբեկյանը, այդ եղանակը դարձել է ստեղծագործական սկզբունք և գեղարվեստի չափանիշ:

Զարդարյանի ցանկացած նորավեպում պարզորոշ ուրվագծվում է կերպարաստեղծման այդ գիծը: «Քահանան ոչ երկչոտ էր, ոչ տկար, բայց իր շուրջը տեղի ունեցող այս անսովոր փոփոխությունը, հայտնի սպառնալիքը՝ որ երկաթե ատրաշեկ շրջանակի մը ուժով հետզհետե կը նեղնար, կը ճնշեր ու իր հոգիեն կը դպնար՝ անհանգիստ կը ներ զինքը. հեռավոր եղբայրներու խողխողումին ու կոտորածին պատկերը՝ կը ցնցեր իր սիրտը, կը հաղորդեր անոր աւելություն, տրտմություն ու խռովք» («Եկեղեցիին առյուծը»): «Տերտերուն հարսը, առանց ուրիշին խոսքին ու խրատներուն, ինքն իսկ արդեն բոլորեն աղեկ գիտեր իր վիճակին ծանրությունը, սակայն նոր ամուսնություն մը, որբի տեր մոր մը նոր պսակը՝ իր մայրական սրբությանը վրա եկած խավար մըն էր, իր զավկին իրավունքներուն դավադրություն մը, այդ որբը երկու անգամ որբացած պիտի ըլլար՝ ապավինելով խորթ հոր մը, խորթ եղբայրներու օտար պաշտպանությանը» («Տերտերին հարսը»): «Բայց ինչ ալ ըլլար իր ծննդյան արժեքի վավերականությունը, որքան աղքատի ալ ըլլային իր աղջկության լաթերը, բավական էր որ իր բախտին դռնակը անսպասելի երջանկության մը վրա բացված էր ու իր էրիկը իր ոսկիե պատվանդանին, իր ազնվականի դիրքին

մեջ ամբարտավան՝ իրավունք չուներ այդ ամենով ապտակելու գինքը ու հինցած լաթի մը պես մեկ կողմ նետելու, ատեն մը անոր նորությունը, անոր հրապույրը անարտորեն վայելելե ետք » («Վա՜խ, ես մեռնեի »):

«Որու՞ ըսեր, թե երիկը ամեն օր իր իսկ աչքին առջև, իր ականջին տակ իրեն պատկանող իրավունք մը հրեշային անհոգությամբ ու համարձակորեն կշռայլեր իր ներոջը» («Սև հավը կանչեց»):

«Տան սերը» նորավեպի Կով Առաքելը Զարդարյանի ամենալուռ հերոսն է՝ այդ բառի ամենալայն իմաստով: Նորավեպի սկզբից մինչև վերջ Կով Առաքելը կարծես լռության սիմվոլ լինի՝ բացառությամբ մեկ-երկու դրվագի, երբ նրան տեսնում ենք բարկանալիս կամ վիճելիս: Մելանխոլիկ խառնվածքի մի կատարյալ տիպար է Առաքելը, որի ողբերգականությունը պարփակված է լռության խորխորատներում: Տպավորիչ է հատկապես այս ստեղծագործության վերջաբանը, երբ որդուն ու կնոջը կորցրած միայնակ Առաքելին տանում են տնից՝ հանձնելու բարեկամի խնամակալությանը: «Ու բաժնվեցավ տունեն ինչպես մորթը կբաժնվի մարմինեն ու եղունգը միսեն. բոլորովին ապուշ կտրած էր այդ օրը. լուռ ու անգա՝ կնայեր հեղ մը ասոր երեսը, հեղ մը անոր, երբ վերջապես թևեն բռնած առին տարին գինքը. կուլար մանկան մը աչքերով՝ որքան գուցե երբեք լացած չէր ոչ իր տղուն, ոչ ալ կնկան դագաղին ետևեն. տունը այդ օրն էր ավերը. ու գնաց ցավով, հոգեկան անդարմանելի խշխիշով»: Իր գոյությունը տան սիրուն քարշ տվող, ծմռան սառնամանիքներից պատերը ծյան ծածկույթից ազատելու առաքելությամբ ապրող Առաքելի համար հարազատ օջախից բաժանվելը հավասարազոր է մահվան: «Տան սերը» նորավեպը, մեր կարծիքով, Զարդարյանի լավագույն երկերից մեկն է, նախևառաջ՝ Կով Առաքելի կերպարի շնորհիվ:

«Սպահով իմ որ Զուլա ավելի լավ չպիտի կրնար պատկերացնել այդ Կով Առաքելն ու իր շրջապատը»[4],- դիպուկ է բնութագրել Երուխանը: «Այդպիսի տիպեր և այդպիսի հոգեբանական սիրտ տրորող վերլուծումներ մենք հաճախ չենք պատահած մեր գրականության մեջ, վերլուծումներ, որոնք հիշեցնում են ռուս նշանավոր արձակագիրներին, մասնավորապես Դոստոևսկուն»[5],- նշում է Սիմոն Հակոբյանը:

Իբրև ամփոփում՝ կարող ենք ասել, որ Ռուբեն Զարդարյանի նորավեպերում առկա բազմաթիվ դրամատիկ հոգեվիճակները փաստարկված են և արտացոլված հոգեբան գրողի վարպետությամբ:

---

[4] Գրական ասուլիսներ, Դ. Կ. Պոլիս, 1913, էջ 22:
[5] «Արեգ», Բ տարի, Բեռլին, 1923, էջ 229: